ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

«22» հունիսի 2025 թ. N 117-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ և 9-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե ներկայացված «ԽԱՉԻՔԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի և «ԴԱՎԻԹՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառում «Շինարարության իրականացում» լիցենզիայի «Հիդրոտեխնիկական կառուցվածքներ» ենթատեսակի ներդիրի պատասխանատու մասնագետի դիմումները

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կասեցնել «ԴԱՎԻԹՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառի «Շինարարության իրականացում» 3-րդ դասի լիցենզիայի (ՔՊԼ-002381) «Հիդրոտեխնիկական կառուցվածքներ» (ՔՊՆ-002381-07) ենթատեսակի ներդիրի գործողությունը: Կասեցման ժամկետ սահմանել մինչև խախտման պատճառի վերացումը:

2. Կասեցնել «ԽԱՉԻՔԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Շինարարության որակի տեխնիկական հսկողություն» 2-րդ դասի լիցենզիայի (ՔՊԼ-002114)

«Տրանսպորտային ուղիներ» (ՔՊՆ-002114-09) ենթատեսակի ներդիրի գործողությունը: Կասեցման ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝ ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձանց իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

7/22/2025

X

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ